Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՔԱՅՑԻՄ 1876 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Ա.

7 ՄԱՅԻՍ 1876

ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1876

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ՇՐՋԱՆ 1876 ԱՄԻՆ

### ՆԻՍՏ Ա.

7 ՄԱՅԻՍ 1876

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Խորէն Արքեպիսկ. Նար Պէյ
2. Կարապետ Եպիսկ. Սեւորեան
3. Ամբրոսիոս Վ. Թոփճեանց
4. Գաբրիէլ „ Թումաճեան
5. Խորէն „ Կերպիկեանց
6. Հմայեակ „ Դիմաքսեան
7. Մատթէոս „ Իզմիրլեանց Բ. Գ
8. Յովհաննէս „ Փափազեան
9. Ներսէս „ Աշըգեան Բ.
10. Պօղոս „ Խաչատուրեան
11. Եղիշէ „ Այվազեան
12. Ա. Քահանայ Բ. Մանուկեան
13. Գէորգ Արշարունի Բ.
14. Գրիգոր Աճէմեան Բ.
15. Խորէն Փէշտիմալճեան Բ.
16. Յարութիւն Սերովբեան Բ.
17. Յովհաննէս Միքէլեան
18. Սարգիս Սահակեան Բ.
19. Սահակ Տ. Սարգսեան Բ. Գ
20.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. ՎԻՃԱԿ)

*Գումգափու, Եէնի գափու եւ Գումգափուի դուրս*

21. Գրիգոր Պէրպէրեան Բ.

---

Բ. Բացակայութիւն առաջին։

Բ. Գ. Բացակայութիւն բանաւոր պատճառաւ։

22. Գէորգ Սալմանեան
23. Խաչիկ Մարտիրոսեան Բ.
24. Կարապետ Ազարեան Բ.
25. Համբարձում Մալխասեան
26. Մինաս Գալֆայեան
27. Յովհաննէս Խորասանճեան Բ.
28. Յովհաննէս Պապազեան Բ.
29. Յովհաննէս Սուրէնեան Բ.
30. Ն. Մէլգոնեան Տօքթօր Բ.
31. Պօղոս Պատուականեան Բ.
32. Պետրոս Քէրէստէճեան Բ.
33. Ռուսինեան
34. Սարգիս Ազնաւուրեան Բ.
35. Սահակ Աբրօ Բ.
36. Սենեքերիմ Մանուկեան Բ. Գ
37. Փէշտմալճեան Տօքթօր

(Բ. ՎԻՃԱԿ)

*Պէշիկթաշ*

38. Բարսեղ Հաճեան Բ.
39. Կարապետ Ա. Իւթիւճեան
40. Յարութիւն Մարգոսեան

*Օրթագիւղ*

41. Խաչատուր Դաղդարեան
42. Կարապետ Գ. Փափազեան Բ.
43. Մաղաքիա Յէնիկեան
44.

*Խասգիւղ Ս. Խաչ*

45. Յովհաննէս Ճանճեան
46. Յովսէփ Ս. Մալլըմեան Բ. Գ
47. Սերոբէ Պասմաճեան Բ.
48. Սարգիս Աղլանեան

*Խասգիւղ Ս. Կարապետ*

49. Մկրտիչ Պաշճըպաշըեան Բ.
50. Յովհաննէս Ճիլանեան Բ.
51. Նիկողոս Ալաճաճեան Բ.
52. Տրդատ Փափազեան

(Գ. ՎԻՃԱԿ)

*Բերա*

53. Ալիք Ունճեան
54. Գրիգոր Սէլիմճեան Բ.
55. Մարտիրոս Յ. Տիրեան
56. Միքայէլ Մամիկոնեան Բ.
57. Նշան Քոլոզեան Բ.
58. Սարգիս Խնդիրեան Բ.
59. Տիգրան Մ. Եղիշէեան
60.
61.

*Գալաթիա*

62.

*Միջագիւղ*

63. Կարապետ Գ. Պէրկեանց Բ. Գ
64. Յակոբ Կոստանդեան Բ. Գ
65. Յակոբ Գ. Նորատունկեան
66. Յովհաննէս Աղայէկեան
67. Տիգրան Եուսուֆեան

*Պէյքօզ եւ Ղալաթիա*

78. Յարութիւն Մերճէլ—Գուլէ

(Գ. ՎԻՃԱԿ)

*Ղուզղունճուք եւ Իճատիէ*

69. Յովհաննէս Լուսեան Բ.
70. Սահակ Պալըքճեան

Գաւըլցիւղ

71. Կարապետ Շահպազեան Բ.
72. Մկրտիչ Մուրատեան Բ. Գ

Նարլըգափու

73. Յակոբ Ինճէճեան

Եէնիմահալլէ Սամաթիոյ

74. Օգսէն Խաճատուրեան

Թօփգափու

75.

Էյուպ Ս. Եղիա եւ Ս. Աստուածածին

76. Գարեգին Յ. Մելիքեան

Գուրուչէշմէ

77. Աստուր Խլխալաչեան Բ.

Հիսար եւ Պօյաճի գիւղ

78 Յովհաննէս Նուրեան Բ.

Նոր գիւղ եւ Ստէնիա

79. Ղազար Հովուեան Բ.

Պէյքոզ

80. Աստուր Գուշատալեան
81. Մկրտիչ Գ. Լեւոնեան Բ. Գ
82. Յովհաննէս Կրճիկեան Բ.

Քարաքէօմրիւկ

83. Յարութիւն Չէնճիրճեան Բ.
84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Գ

(Ե. Վիճակ)

Սամաթիա

85. Ալեքսան Պէլիրեան
86. Աւետիս Քօլօլեան
87. Եղիազար Մելիքեան
88. Մինաս Ճամճամեան
89. Յակոբ Քազազեան Բ.
90. Յակոբ Ալմաեան
91. Նազարէթ Շահպազեան
92.
93.
94.

Խասգիւղ

95. Աստղիկ Ալթուն Տէրբ Բ.
96. Խաչատուր Պ. Մինասեան Բ.
97. Օքթէմ Պէյլիկճեան Բ.
98. Սարգիս Աւագեան
99. Սարգիս Աբրահամեան Բ.
100. Սիմոն Միքայէլեան

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Կիւրին

101. Մանուկ Ալանեան

Քէօրանեա

102

Ադրիանուպոլիս

103 Ռուբէն Կիւմիւշկէրտանեան

Նիկոմիդիա

104. Տիգրան Կիւմիւշկէրտանեան Բ.

Ակն

105. Պետրոս Միսաքեան Բ.

Ղարահիսար

106.

Արաբկիր

107. Կարապետ Խայիկեան

Բաղէշ

108

Պրուսա

109. Քրիստոսատուր Ղազարոսեան

Եւդոկիա

110. Մելքոն Հայանեան

Ամասիա

111. Համբարձում Ալեանեան

Բալու

112. Յովհաննէս Աղնաւորեան

Եդեսիա

113. Յակոբ Իւթիւճեան

Մէնէմէն

114.

Հաճըն

115.

Երզնկա եւ Բաբերդ

116.

Թէքիրտաղ

117. Տիգրան Գ. Արմանեան Բ.

Կեսարիա

118 Մատթէոս Մ. Ալաճաճեան Բ. Գ

Խարբերդ

119. Յովհան Եսաճեան

Պալըքէսիր

120. Յովհաննէս Յովակիմեան

Մուշ

121. Սանտխտ Պ. Գ. Փափազեանց

Տիվրիկ

122.

Չկրուն եւ Մուրուշ

123.

Տրապիզոն

124. Մկրտիչ Կիւրճեան Բ.

Պաղտատ

125.

Տիգրանակերտ

126. Թադէոս Թէրզեան Բ.

Վան

127. Սիմոն Մաքսուտեան Բ Գ

Աղթամար

128.

Հալէպ եւ Այնթապ

129.

Սեբաստիա

130. Մկրտիչ Մելիքեան

Ռուսճուք

131.

Կարին

132. Աբրահամ Յ. Ալթունեան

Չմշկածագ

133. Համբարձում Սարըքիւլեան

Գաղատիա

134

Ադանա

135

Արղնի

136. Մատթէոս Ալիքանեան

Եոզղատ

137. Լօրօֆէլ Պալեօզեան Բ. Գ.

Մալաթիա

138.

Իզմիր

139.

Եգիպտոս

140

# ՕՐԱԿԱՐԳ

Ա. Բացում ժողովին ի Ս. Նախագահէն.
Բ. Կարդում ատենական դիւանի.
Գ. Քննադատութիւնք յետին երեք նիստերու,
Դ. Կազմութիւն Մայր դիւանին.

## Ա.

### Բացում ժողովին ի Նախագահէն

Ամեն. Նախագահ Սրբազանը բացաւ Ազգային Ժողովը հետեւեալ ճառով.

Տեա՛րք Երեսփոխանք Հայոց.

Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս այս տարի բարեբաղդ կը համարիմ զիս Ազգ. Ժողովը բանալու համար։ Փառք կու տամ Աստուծոյ որ այսօր ժողովոյդ այս անցեալ տարուան մէջ ունեցած շատ մը գործերը գրաւորելու կարող եմ. վասն զի այս վերջին տարուան ընթացքին առաջինէն աւելի արդիւնաւոր եղաւ ձեր վճռած եւ որոշած խնդիրներով. Եւ սոյր պատճառն է կատարելութեանց առջի տարիներուն չափ կիրք չը յայտնելը եւ անցելոյն նայելով՝ ներկային մէջ փոխադարձ զիջողութիւններ ընելը. այս այսպէս ըլլալուն ես կը վկայեմ, եւ կը մաղթեմ որ Աստուած արժանի ընէ զձեզ աւելի արդիւնաւոր նիստերով այս տարին ալ յաջողութեամբ բոլորելու։ Քանի որ անցեալը ներկային հայելին է, մարդս անցելոյն վրայ նայելով կրնայ ներկան տեսնել եւ իր պակասութիւններն ուղղել. պակասութիւն չունեցող չի կայ. ժողովի մը անդամները կրնան սխալիլ, բայց ժողովը դժուարաւ կը սխալի. ուստի կը բարեմաղթեմ որ անցելոյն վրայ ձեր ապագան աւելի արդիւնաւոր լինի։

Ըստ որում այսօր մեզի համար հաշիւ տալու օր է, ես կը բաղձայի որ անցեալ տարուան պէս գրաւոր ներկայացնէի մեր գործառնութեանց հաշիւը. սակայն զբաղմանցս յաճախութենէն ժամանակ չունենալով գրաւոր ներկայացնելու, պիտի ջանամ խմամբ բերանացի համառօտել մեր հաշիւը։

Նախ՝ կը վկայեմ որ մեզ աջակից գտնուող Վարչական ժողովներն ու խորհուրդներն ամենն ալ սա հաստատակ աշխատեցան, ազգասիրաբար գործեցին եւ ազգային գործերը դիւրացնել ջանացին. որոց ամենուն համար շնորհակալութիւնս կը յայտնեմ։ Գիտէք ամէն անհատականութիւնս կը յայտնեմ։ Գիտէք ամէն անգամ մեծամասնութեամբ նիստ կազմեցին, եւ երջանիկ կը համարիմ զիս՝ որ առանց վարչական տագնապ մը յարուցանելու՝ մեր ժողովական ազգասիրութեան շնորհիւ կարող եղանք մեզ ներկայացուցեալ խնդիրներն ըստ կարի կարգադրել. թէպէտ մեր կարողութենէն վեր եւ հնչած խնդիրները Պատրիարքի ժողովոյդ ներկայացընելով, շնորհ ունիմ, որ անոնց լուծմանը համար հաճեցիք մեզ։ Վերջապէս՝ ներկայ Վարչութիւնն ինչ որ կրցաւ ընել, զայն ըրաւ, եւ չկրցածն իր յաջորդին թողուց։

տկարութիւններ ունեցած եմ և սխալ ունենամ ալ՝ եթէ հիւանդութիւնս շարունակէ ։

Ուստի երբ ես հրաժարականի խօսք կընեմ , մի կարծէք որ քաղաքականութեան մը համար կամ պաշտօնիս մէջ առաւել հաստատուելու նպատակաւ կընեմ , ես սրտով և անկեղծ միտքն եմ . գենայս մէջ երբեք խաբելու և խորամանկելու միջոցներ ձեռք առած չեմ և չեմ առներ .

( ՁԱՅՆԵՐ . — Քաւ լիցի )

Թէև շատ յանդգնած եղեր եմ , սակայն ազգային խարդախութեանց տէր չեմ ։ Քաւ լիցի որ այսօր հրաժարականի խօսք ընեմ , ազգային դժուար ժամանակի մը մէջ , բայց կանխաւ կըսեմ թէ տկար եմ , բժիշկները կըսեն թէ օրը գոնէ երկու ժամ պէտք է շրջագայիմ , շատ անգամ Պատրիարքարան ալ չեմ գար , սակայն Պատրիարքարանին իմ տունէս կուգայ , ուր որ երթամ , գործերն տունէս կը տեղան կը հասնին ։ Եթէ այն պարագաներն՝ որոց մէջ կգտնուինք , չըլլային , այսօր սիրով խնդրէի որ հրաժարական ընդունիք և թոյլ տաք ինձ պաշտօնէս քաշուելու ։ Կյուսամ որ խօսքիս այլ ընդ այլոց մեկնութիւններ չտաք , կարծելով որ ես հրաժարականի խօսք ընելով կուզեմ աթոռին վրայ հաստատուիլ , կամ ուրիշ նպատակ մը ունիմ . ո՛չ երբէք . միայն հիւանդութիւնս զիս ձեռնթափ ընել կարող է . թէպէտ չէք հաւատար , հարցուցէք զիս նայող բժիշկներուն , որոնք հոս ալ կը գտնուին . ես ձեր խղճին կը թողում և կհարցնեմ թէ կհաւատա՛ք արդեօք իմ հիւանդութեանս . . .

( Երեսփոխանք միաձայն . — Այո՛ կհաւատանք )

Բայց այս միջոցիս , ինչպէս որ ըսի , չպիտի հրաժարիմ , ժամանակիս պարագաները չներելուն համար ։ Ուստի կաղաչեմ զձեզ՝ որ ամեն ժամանակէ աւելի լուրջ և արթուն և շրջահայեաց ըլլաք ։ Հոս միայն եկու հին փիլիսոփաներէն մեկուն աս խօսքն՝ որ կըսէ թէ « յիշեա՛ ով մարդ , ո՛ր , ո՞ր և ընդ ո՞ւմ իցես » . այսինքն յիշէ թէ ինչ ժամանակի մէջ , ո՞ր տեղ և որո՞ւ հետ ես ։ Ես այսչափ կըսեմ թէ , ձեր ազգասիրութիւնն ամեն ժամանակէ աւելի հիմա բացայայտուելու ատենն է . մեր ազգըն Օսմանեան տէրութեան հետ սիրով ապրի և երբէք անկէ չբաժնուի . երբէք մեր ազգն ուրիշ քաղաքականութեանց գործիք չըլլայ . այս խօսքերը՝ զոր հոս կըսեմ , Տէրութեան մեծ նախարարաց և ուրիշ տէրութեանց ներկայացուցչաց ալ ըսած եմ ։ Ուրեմն փորձով ցուցնենք միշտ Տէրութեան ունեցած հաւատարմութիւնիս ։ Պէտք չէ բնաւ մոռնալ որ Օսմանեան տէրութիւնը մեծ բարերարութիւններ ըրած է մեզ . մեր կրօնքին , մեր լեզուին և մեր ազգութեան մինչև ցայսօր պահպանութիւնն Օսմանեան տէրութեան պարտական ենք , մեր բաղդն այս տէրութեան բաղդին հետ սերտիւ կապուած է ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Բայց Արխասկէս Եպիսկոպոսին չափ առաջ երթալու չէ ։

Ձայներ . — Տեղեկութիւն ունի՞ք .

ՆԽԳՀ . ՍՐԲԱԶԱՆ . — Ո՛չ ։

Ձայներ . — Պէտք է հարցուի ։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Կը հարցնեմ ։

Վասն որոյ պարտաւոր ենք աղօթել մեր Օգոստափառ Կայսեր համար . Աստուած երկար կեանք տայ Նորին Վեհափառութեան , և Իր Թագաւորութիւնը հաստատ և անսասան պահէ ։ Նոյնպէս լոյս և իմաստութիւն շնորհէ նախարարաց՝ որ կարող ըլլան պահպանել և կառավարել զՏէրութիւն ։

( Երեսփոխանք համօրէն . — Ամէն , եղիցի և եղիցի ։ )

Այս տէրութեան ամեն յաւերժան յաւակից և արդարութեանցն արժանակից եղած ենք և սիրտ ըլլանք միշտ . այնպէս կը խոստանանք ամենք ալ , ձեր ալ իմ ալ քաղաքականութիւնն մէյ եղած է և մէյ պիտի ըլլայ , այնպէս չէ՞ , դուք ալ համաձայն չէ՞ք ինձ հետ ։

( Երեսփոխանք միաձայն . — Այո՛ , այո՛ )

Ուրեմն ես վստահութեամբ կարող եմ յայտարարել ամեն տեղ՝ թէ մեր Հայքս՝ Օսմանեան մեծ պետութեան զաւակաց պատուանդանն ընդգրկած ենք , Օսմանեան ազգէն անբաժան միացած ենք և սիրով մնանք խաղաղ ։

( Այո՛ , այո՛ )

Խօսքս կվերջացնեմ հիմա միայն խնդրածն սրտով և համոզմամբ խօսելով ի միասին հայ եկեղեցականութեան ։ Ազգիս մէջ մաս մը կայ՝ բողոքական հակառակ եկեղեցականաց , այնպէս որ զանոնք կապրանքնեն և մինչև գլուխ հասաւար կընեն . մաս մ՚ալ կանեմեմ որ այն աստիճան կըպարճրցնեն եկեղեցականներն՝ որու օրինակը մեր մէջ չկար մինչև ցարդ ։ Ուստի կաղաչեմ որ ոչ մէկ կողմն եկեղեցականաց յարգըն այնքան չնուաստ՝ որ մինչև զանոնք նախատած ըլլայ , և ոչ միւս կողմն անոնց չափէն աւելի երես տայ . մեր ազգն եկեղեցականով և ժողովրդով մէկ մարմին ենք անբաժանելի , ինչպէս միսն ու արիւնն ։ Ես իմ անձիս համար կըսեմ . արժանի չեմ և կըզարմանամ այնքան ներբողներու որ երբեմն ինձ կուգուին , բայց և ոչ ալ արժանի այնքան նախատուած և ծաղր ու ծանակ ըլլալու ։ Մեր եկեղեցականութիւնն ո՞ր ժամանակ այդքան նախատանաց արժանի ըլլալու չափ նուաստ գործեր ըրած է , ո՞ր ժամանակ հայ եկեղեցականութիւնը մատնութիւն և դաւաճանութիւն ըրած և ազգը ծախած է բայ ի Հռոմ [illegible] դէպքերէ ։

Ուրեմն կը խնդրեմ որ թէ՛ լրագրաց խմբագիրներն և թէ՛ անոնց համախոհ եղողները խնայեն մեր եկեղեցականաց , որպէսզի անոնք յուսով և ներողութեամբ կանցնեն օրերնին , պէտք է որ նախատինքներն ու նշաւակութիւնները վերնան ։

Կյուսամ որ այսուհետև անցեալը մոռնալով , նոր սիրտ և նոր ոգի կզգենունք նոր աշխուժիւ ազգասիրութեան , և Աստուած հայ ազգս և զանոնք մեզ և ձեզ հետ կ՚ըլլայ այժմ և միշտ և յաւիտեանս ։

ԵՐԵՍՓՈԽԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ . — Կեցցէ Ամենապատիւ Նորին Սրբազան Պատրիարք Հայրն ։



## Բ .

### Կարգաւ ատենական Դիւանին

Յետ աւարտման Նախագահական ճառին , Նորին Սրբազնութեան հրամանաւ ատենակաց դիւանը կազմուեցաւ . երիցագոյն երեսփոխաններէն Յովակիմեան Յովհաննէս էֆէնտի՝ Ատենապետ և կրտսերագոյններէն Մելիքեան Մկրտիչ էֆէնտի՝ Ատենադպիր բազմելով ։

Ատենակալ Ատենապետ էֆէնտին անմիջապէս առաւ բացաւ ժամը 7 3/4 ին ի ներկայութեան 54 երեսփոխանաց , որոց վերջին թիւը 59 ի յանգեցաւ ։

Դիւանն ըստ Օրակարգին այն ինչ կսկսէր յետին երեք նիստերուն ատենագրութեանց վըրայ երեսփոխաններն ի գիտութիւն հրաւիրել , Օգոսէն էֆէնտի յիշեցուց թէ ժողովն ըստ կանոնագրութեան պարտաւոր է նախ Մայր Դիւանի կազմութեան ձեռնարկել և յետոյ ուրիշ գործերով զբաղիլ ։ Այն յայտարարութեան ուրիշ երեսփոխաններ ևս մասնակցելով , ատենակալ դիւանն ըստ հաւանութեան ժողովին անցաւ անմիջապէս Մայր Դիւանի կազմութեան խնդրոյն ։

## Գ .

### Կազմութիւն Մայր Դիւանին

1° Ընտրութիւն Ա . Ատենապետի .

Ատենապետ էֆէնտին յայտարարելով որ ըստ կանոնագրութեան նախապէս Ա . Ատենապետի համար քուէարկութիւն պիտի ըլլայ , հրաւիրեց երեսփոխաններն որ իրենց քուէները միանուն պատրաստեն ։

Քուէհամարի համար քննիչ կարգուեցան Դիւանին ընտրութեամբ ։

Տ . Խորէն Վարդապետ Կիրեան
Տ . Յովհաննէս Քահանայ Մկրեան
Գէորգ էֆէնտի Աթմաճեան
Նազարէթ » Շահպազեան

Քուէարկութիւնք կատարուելով, քուէհամարի արդիւնքն եղաւ ։

Թիւ քուէարկուաց 58 Նախագահ Սրբազանով հանդերձ ։

| | | | |
|---|---|---|---|
| Արսլանեան Յովսէփ փաշա | | 54 | քուէ |
| Եուսուֆեան Տիգրան էֆէնտի | | 2 | » |
| Ռուսինեան | » | 1 | » |
| Փափազեան Յովսէփ | » | 1 | » |

Հետեւապէս Արսլանեան Յովսէփ փաշա ընտրուեցաւ Ա. Ատենապետ, և ըստ հրաւիրանաց Սրբազան Նախագահին և ժողովոյն անցաւ անմիջապէս իր Ատենապետութեան աթոռն ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երկրորդ գործերնիս Դիւանի միւս անդամները ընտրել է. սակայն ներեցէք որ այդ գործին ձեռնարկելէ առաջ շնորհակալութիւն յայտնեմ ժողովին՝ անընդմիջապէս երկրորդ անգամ զիս յաթոռ ատենապետութեան կոչելուն համար ։

Գիտեմ փորձով՝ որչափ ծանր է ինծ յանձնուած պաշտօնն, այլ ըստ որում պարտաւորութիւն է մեծամասնութեան ձայնին հնազանդիլ, յօժարակամ կրծայեմ իմ անձնուիրութիւնս, և կը յուսամ որ ժողովդ շնորհ ընէ իր կողմէ մասամբ օժանդակել պաշտօնավարութեանս, գիտնալով որ մեր գործոց յաջողութիւնն ու Ազգին յառաջադիմութիւնը ձեռք բերելու համար անհրաժեշտ հարկ է անխոնջ միմեանց վրայ վստահութիւն և կատարեալ հետեւողութիւն ունենալ ։

Օրէնքն արդէն գծած է մեր առջեւն գործոց շարքն ու ընթացքը. բայց ներեցէք որ համառօտիւ յիշեցնեմ Ձեզ գլխաւոր գործերնիս որ են՝ Ա. Վերակացութիւն Վարչութեան, Համարատուութիւն ի հնոյն, և Հսկողութիւն նորոյն վրայ. Բ. Հաստատութիւն ներկայ տարւոյ Պիւտճէին, և Գ. Վերաքննութիւն Սահմանադրական օրինաց, կանոնաց և հրահանգաց ։

Այսպէս եարբ բնական է որ ամէն խնդիրներ պիտի ներկայանան մեզ ըստ իւրեանց կարգին, որոց լուծումը ժողովս կը պատրաստի ըստ Սահմանադրական օրինաց ։

Այսօր որ մեր կանոնադրութիւնք չէ ցուցուցած մեզ տրամադրութիւն մը, Նախագահ Սրբազան Հօր բացման ճառին պատասխանելու համար ուղերձ մը պատրաստել ժողովոյ ինչպէս սովորութիւն է Եւրոպայի ժողովոց մէջ, ասով Նորին Սրբազնութեան խորհրդոց՝ ժողովոյս բրած տպաւորութիւնը յայտնելու գառ, մեր գործոց ընթացքը և ուղղութիւնը (programme) հաստատելու առիթ կունենայինք. այսու ամենայնիւ ակրոյդ չեմ համարիր այս հարկը լրանելու համար քանի մը խօսք ասելու ։ Ամենքս լսեցինք մեր Սրբազան Հօր խօսքերը, և մի առ մի վերահասու եղանք իր պաշտօնավարութեան օրով կատարուած երեւելի գործերուն. արդարեւ փառք է մեզ որ այսպիսի Պատրիարքի մը օրով կոչուած ենք Ազգային պաշտօնի, Պատրիարքի մը՝ որ ձեռնարկեալս կատարածէ իր անուան և իրաւամբ մեծ և շնորհալի Ներսէսներու շարքին մէջ մտնելու կարժանանայ ։

Այժմ կանցնիմք Դիւանի Խորհրդոյ անդամոց ընտրութեան գործը շարունակելու ։

2° Ընտրութիւն երկու փոխ-Ատենապետաց

Ատենապետ փաշան հրաւիրեց երեսփոխանները՝ երկու փոխ-Ատենապետաց ընտրութեան համար երկանուն քուէ պատրաստել ։

Քուէհամարը միեւնոյն ընթացքով հսկողութեան ներքև կատարուելով՝ արդիւնքն եղաւ ։

Թիւ քուէարկուաց էր 59 Նախագահ Սրբազանով հանդերձ ։

| | | | |
|---|---|---|---|
| Ռուսինեան | էֆէնտի | 38 | քուէ |
| Եուսուֆեան Տիգրան | » | 34 | » |
| Շահպազեան Կարապետ | » | 17 | » |
| Նուրեան Յովհաննէս | » | 14 | » |
| Ղազարոսեան Քառուր | » | 8 | » |
| Փափազեան Յովսէփ | » | 4 | » |
| Քաղազեան Յակոբ | » | 1 | » |
| Սթիմոնճեան Գէորգ | » | 1 | » |
| Մէրհէմ-Գալի Յարութիւն | | 1 | » |

Հետեւապէս քուէից առաւելութեան կարգաւ ընտրուեցան՝

Ռուսինեան էֆէնտի Բ. Ատենապետ
Եուսուֆեան Տիգրան էֆ. Գ. Ատենապետ

3° Ընտրութիւն երեք Ատենադպրաց.

Ատենապետ փաշան հրաւիրեց երեսփոխանները երեք Ատենադպրաց ընտրութեան համար եռանուն քուէ պատրաստել ։

Քուէհամարը կատարուելով, արդիւնքն եղաւ ։

Թիւ քուէարկուաց 59 Նախագահ Սրբազանով հանդերձ ։

| | | | |
|---|---|---|---|
| Մէլիքեան Գարեգին | էֆէնտի | 45 | քուէ |
| Ալթունեան Առաքել | » | 27 | » |
| Ալաճաճեան Համբարձում | » | 27 | » |
| Այվազեան Աբրահամ | » | 24 | » |
| Մելիքեան Մկրտիչ | » | 18 | » |
| Փափազեան Յովսէփ | » | 10 | » |
| Մէրհէմ-Գալի Յարութիւն | » | 7 | » |
| Պատանեան Պօղոս | » | 4 | » |
| Էնպուէրճեան Տէլէմաք | » | 4 | » |
| Նուրեան Յովհաննէս | » | 2 | » |
| Էմինիճեան Յակոբ | » | 2 | » |
| Սթիմոնճեան Գէորգ | » | 1 | » |
| Ամասեան Յակոբ | » | 1 | » |
| Մազլումեան Յովսէփ | » | 1 | » |
| Մանկասարեան Խաչիկ | » | 1 | » |
| Մելիքեան Եղիազար | » | 1 | » |
| Անորոշ ըլլալուն պատճառաւ ոչնչացած | | 2 | » |

Հետեւապէս քուէից առաւելութեան կարգին համեմատ ընտրուեցաւ՝

Մէլիքեան Գարեգին էֆ. Ա. Ատենադպիր։

Իսկ Բ. և Գ. Ատենադպրաց համար առաւելագոյն քուէ առողջ երկու անձանց քուէները հաւասարութիւն ըլլալով, ըստ առաջարկութեան Փափազեան էֆէնտիին՝ անոնց կարգն որոշելու համար նոյն երկուքին վրայ վիճակ ձգուեցաւ, և առաջին վիճակն ստացաւ Ալաճաճեան էֆէնտի, որով՝

Ալաճաճեան Համբարձում էֆ. Բ. Ատենադպիր
Ալթունեան Առաքել » Գ. Ատենադպիր
ընտրուեցան ։

Այսպէս Մայր Դիւանի ընտրութիւնն ամբողջանալէ ետև, Ատենապետ փաշան ընտրութեան համայն արդիւնքը ժողովին ներկայացուց, որ է՝

| | | | |
|---|---|---|---|
| Արսլանեան Յովսէփ փաշա | | Ա. | Ատենապետ |
| Ռուսինեան | էֆէնտի | Բ. | » |
| Եուսուֆեան Տիգրան | » | Գ. | » |
| Մելիքեան Գարեգին | » | Ա. | Ատենադպիր |
| Ալաճաճեան Համբարձում | » | Բ. | » |
| Ալթունեան Առաքել | » | Գ. | » |

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մայր Դիւանի ընտրութենէն ետև ժողովիս գրաւելիք անմիջական գործողութիւնն է Նախաքննիչ դիւանաց ընտրութիւնը կատարել, որոյ համար թէև ատենական կանոնին 8 օրէն ժողովը գումարել կը տրամադրէ, սակայն յառաջիկայ հինգշաբթի օր Համբարձման տօն ըլլալով՝ հետեւեալ ուրբաթ օր շատերը չկրնալ գալուն պատճառաւ բաւական կայ թէ 15 օրէն գումարուի յաջորդ նիստը ։

Ուստի այս բացառիկ պարագան նկատելով զմեզ 15 օր յետաձգել յաջորդ նիստը, որոյ առաջին գործը պիտի ըլլայ Նախաքննիչ դիւանաց ընտրութիւնը կատարել ։ Թէպէտ և այն դիւանաց թիւն ալ յառաջ նշանակելու առաջարկութիւն ընդուներ եղան, սակայն դեռ այս մասին ժողովոյ կողմէն նոր որոշում մը եղած չըլլալուն համար, այս անգամ ևս ըստ տրամադրութեանց մեր կանոնադրութեան ընտրութիւնը պիտի կատարի ։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այժմ ամսոյս խոն գրոյ մասին Ազգային ժողովոյ բրած վերջին որոշման համեմատ գրած թագրիրներուս պատասխանը Բ. Դրանէն եկած ըլլալով՝ կառաջարկեմ որ առաջիկայ նիստին այն ալ խնդրոյ կարգն անցնի ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Հայր, ձեր այդ բանն Օրակարգն անցնելու կարօտութիւն չունի, այլ կրնայ առաջիկայ նստի ատենական գործողութեանց շարքին մէջ մտնել, ինչպէս նաև այսօրուան Օրակարգին մէջ անցած վերջին երեք նստերու ատենագրութեանց վաւերացումն ալ, որ ատենական գործողութեանց առաջին կարգին կը վերաբերի և որ այսօր ետ մնաց. հարկաւ ներկայ նստին ատենագրութեան հետ անոնք ալ պիտի վաւերացուին ։

Իսկ Օրակարգի մէջ անցնելու խնդրոյ գալով, երկրորդ խնդիր պէտք է ըլլայ Վարչական ժողովոյ վերակազմութիւնը, և նախորդաց համարատուութիւնն, և երրորդ՝ ներկայ սահմանադրական տարեգլխոյ առթիւ պէտք եղած պիւտճէին պատրաստութիւնը:

Վարչական ժողովոյ ընտրութեանը համար ըստ կանոնի նախ պէտք է մեր Նախաքննութեան դիւանները կազմենք. ուստի անոր վրայ այժմէն խօսիլն աւելորդ կհամարիմ: Վարչական Համարատուութիւնն 1870 թուականէն սկսեալ հետզհետէ գրուած և արդէն հրատարակեալ տեղեկագրերը թէ և Նախաքննիչ դիւանաց յղուած, բայց անոնց քննութիւնը տակաւին կատարուած և արդիւնքը Ժողովոյս ներկայացուած չեն: Ես կառաջարկեմ որ Համարատուութեան գործն իբրև անհետաձգելի և յանապաղ կարգադրելի խնդիր փոխանակ նորընտրելի Նախաքննիչ դիւանաց մէջ մասն մասն բաժնելու, առաջիկայ նստին մէջ յատուկ յանձնաժողով մը ընտրելով՝ անոր յանձնենք ամենը և շուտափոյթ քննութիւնը խնդրենք: Նոյնպէս յանձնաժողով մ'ալ ընտրենք ազգային եկամտից Պիւտճէն քննել և պատրաստելու համար, որ խիստ կարևոր է և սուղ ժամանակի մէջ կարգադրուելու և վաւերացուելու կարօտ:

Ժողովն Ատենապետ Փաշային վերջիշեալ յայտարարութիւնն ու առաջարկութիւնն ընդունելով, ՈՐՈՇԵՑ յաջորդ նիստը 15 օրէն գումարել, Օրակարգ ունենալով՝

Ա. Ընտրութիւն Նախաքննիչ դիւանաց:

Բ. Ընտրութիւն Համարատուութեան յանձնախմբի:

Գ. Ընտրութիւն Ելևմտից յանձնախմբի:

Դ. Վերակազմութիւն Վարչական ժողովոց:

Ե. Վերաքննութիւն Սահմանադրութեան.– Վիճաբանութիւն Բ. յօդուածոյ վրայ, որ է Թաղային մատակարարութիւն:

Ատենը ցրուեցաւ ժամը 9 1/2 ին:

| ԱՏԵՆԱԴՊԻՐ | ԱՏԵՆԱՊԵՏ |
|---|---|
| Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ | Յ. ԱՐՍԼԱՆԵԱՆ |

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

# ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

*Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ գրավաճառաց քով ։*